

Ըստ խելացի պատասխանին վրայ ամենքը կը զարմանան, ու ծափ զարնելով Օ կ'պը ձեմարանին ընկեր կը գրեն, և ձեմականաց ցանկը առջևը կը դնեն որ ըստ կարգի իր անունն ալ մէջը ստորագրէ: Ընունը կը գրէ. բայց սովորութիւն մ'ալ կայ եղեր որ ձեմարանի ընկեր գրուողները ձեմականաց կարճ շնորհակալութի մը կ'ընեն եղեր: Օ կ'պը առանց բան մը խօսելու գրքին լուսանցքին մէջ թուանշանով կը գրէ հարիւր (100) ձեմարանի ընկերաց թիւը, անոր ալ առջևը կը դնէ զրոյ (0100) տակն ալ կը գրէ, « Այ կ'աւելնայ ոչ կը պակսի », Կախազահն ալ ասոր խոնարհութիւր տեսնելով՝ մէկէն հարիւր (100) գրելն ետև առջևը մէկ կը դնէ (1100) ու տակը կը գրէ, « Տասը անգամ կ'աւելնայ »:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻԲ

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Սեր ո գրին հնչմանը վրայ:

Սեր լեզուին պէս պատուական ու ճոխ լեզուի մը յատկութիւնները անարատ պահել ջանալը՝ ազգասիրութեան ճշմարիտ նշաններէն մէկը պիտի ըլլայ. անոր համար ազգասէր ընթերցողաց ալ հարկաւ սիրելի կ'ըլլան այսպիսի տեղեկութիւնները:

Ինչպէս որ է գրին փափուկը ունինք մեր լեզուին մէջ, որ է եչը՝, այսպէս ալ օ գրին փափուկը կայ, և է * գիրը:

() գրին հնչմունքը այնպէս յայտնի է որ բացատրութեան կարօտ չէ. բայց * գրինը ամէնքը չեն գիտեր: Ըստ բուն հնչմունքն է ու, շուտով հնչուած, ինչպէս որ գրին անունէն ալ կ'իմացուի. և յայտնի է որ մեր լեզուին փափուկութիւններուն մէկն

ալ աս է: Ըհա Ընգղիացիք ալ իրենց լեզուին սկզբնական W գիրը փափուկ ձանձնալով կը ջանան հնչմունքը ճիշդ պահել. ուստի մեծ սխալ կը համարին՝ թէ որ մէկը want բառը ունի հնչելու տեղը՝ վնի հնչէ: Կմանապէս Խտալացիք լատին լեզուի բառերը փափկացրնելով, շատ բառերուն օ գիրը ու դարձուցեր են իրենց լեզուին մէջ. ինչպէս,

- Լտ. bonus պոնուս, իտ. buono պոնո կիփոնուս.
- focus ֆոչուս, — fuoco ֆուչո կիփոչուս.
- jocus յոչուս, — giuoco ճիւօ կիփոչուս.
- tonus թոնուս, — tuono թոնո կիփոնուս, ևն:

Բայց մեր ազգին մէջ աս գրիս վրայ ալ քանի մը տեսակ սխալ հնչմունք մտած է. գլխաւորները ասոնք են.

Ա. Բառերուն մէջ շատը այնպէս կը հնչեն ու՝ իբր թէ օ գրուած ըլլար: Ըստ հնչումը թանձր ըլլալէն զատ աս պակասութիւնս ալ ունի, որ շատ բառերուն նշանակութիւնն ալ կը փոխուի. օրինակի համար աս բառերուս ուն օ հնչուի նէ, ուրիշ բառ կ'ըլլան.

- խոլ, ուտեղ, խօլ, ինէր.
- Հոտ, (գոգո), հօտ, (օր-րի-).
- Ի հօրէ, իտէն, ի հօրէ, հօրէն, ևն:

Բ. Բառերուն սկիզբն որ գրուի աս գիրը, ոմանք նոյնպէս օ կը հնչեն. ինչպէս՝ ողորմեա, ո՛վ, ոքք բառերը կը հնչեն օղորմեա, օ՛վ, օքք: Ոմանք ալ վրան վե՛վ մը դնելով կը հնչեն. զոր օրինակ կ'ըսեն վօղորմեա, վօ՛վ, վօքք, վօրդի, և այլն, որ երկուքն ալ մեծ մեծ սխալներ են:

Գ. Բուն հայաստանցոց մէջ Սշոյ գաւառին բնակիչները և ուրիշ քանի մը տեղուանք թէպէտ լաւ կը հնչեն աս գիրը, բայց ուրիշները ընդհանրապէս չափէ դուրս կը ձգմեն հընչմունքն ու ու՝ ըսելու տեղը կ'ըսեն ու՛ է. ու՛ էմն՝ ի նո՛ւ էցանէ, սո՛ւ էրա ու՛ էրդի, և այլն:

Ոմանք ալ, ինչպէս Ս անեցիք, աւելի կը փոխեն հնչմունքն ու տաճկի էօ հնչմանը կը մօտեցընեն. զոր օրինակ * ըսելու տեղը կ'ըսեն քէօ, զոր ըսելու տեղը կ'ըսեն պէօր, և այլն:

Այսպիսի բաւական սեպուի մեր ազգին վարժապետներուն միտքը ձգելու աս գրին հնչման շիտակն ու ծուռը, և զիրենք յորդորելու որ ջանան իրենց հայկազուն աշակերտացը թարմ միտքն ու լեզուն կանուխկեկ կրթելու մեր լեզուին ու զիղ առողջանութեանը մէջ :



Պարոն Յարութիւն Ղարեգին Տաթեանի Սէնթի :

Պարոն Յարութիւն Ղարեգին Տաթեան ազնիւ պատանին իրեք տարիի չափ Պարիզ զանազան գիտութիւններ սորվելու հետ էր, և արդէն իր զարմանալի յառաջագիմութեամբը Պարիզու մէջ հռչակուած, մեր օրագրիս ալ աս տարի ինքնայօժար գործակցութեամբը պատիւ ըրած էր :


Սէզի մեծ ուրախութիւն է հոս ծանուցանելը, թէ աս մեր հանձարեղ ու տաղանդաւոր իշխանազունը աս տարի յուլիսի 23^ն քննուեցաւ Պարիզու թագաւորական ճեմարանին քաջ վարժապետներէն՝ Չափաբերութեան, Բնաբանութե, Բնական պատմութեան ու Տարրալուծութեան մէջ, ու ամէն հարցմունքներուն քաջութիւնը պատասխան տալով՝ Ղարեգին համալսարանէն ընդունեցաւ Չափաբերական և Բնական գիտութեանց վարժապետութեան Բռնաջին աստիճանը՝ որով իր և իւր տոհմին ու ազգին անունը կրկին պայծառացուց :

Իսկ հիմա քիչ ատենի համար Պօլիս դառնալու ըլլալով, Սէնթիկ հանդիպեցաւ քաղաքիս տեսնելու արժանի տեղուանքը կիրթ ախորժակով ու սրամիտ գիտողութեամբ զըննեց, ու իր ազնուաբարոյ՝ բարեկիրթ և ուսումնասէր բնաւորութեան կա-

1 Գ.Ղ. Baccalauréat ès sciences.

տարելութիւններով՝ ամէն զինքը տեսնողներուն ու իր մեծանուն ազգատոհմը ճանչցողներուն գովելի ու սիրելի եղաւ :

Պարօտ է մեր ազգը այսպիսի ակընկալութեանց և ահա գեղափոխութիւն ծաղիկ մըն ալ՝ որուն պտուղները հարկաւ պիտի վայելէ ըստ ժամանակին, ուստի և իրաւամբ կրնայ մեզի հետ ազգն ալ հիմակուընէ ուրախանալ :



ԱՇԽԱՏԱԳՐՈՒԹԻՒՆ

Վրաբովիայի հասարակապետութեանը վրայ գիտելի :

Ընդ 1846 տարուանս մէջ եղած դիպուածներուն գլխաւորներէն մէկը կը սեպուի Սէհացոց ետքի ապրտամբութիւնը և թէպէտ աս խռովութիւնը շուտով դադարեցաւ, ու մեծամեծ պատրաստութիւններուն համեմատ վերջ մը չունեցաւ, բայց բաւական նիւթ եղաւ քաղաքագէտ մարդկանց խօսակցութեանը : Սէնթ հոս կ'ուզենք միայն ընդհանուր տեղեկութիւն մը տալ Վրաբովիայի հասարակապետութեանը վրայ, առանց աս տարուան դիպուածները պատմելու :

Սէհերը 1795^ն իրենց թագաւորութիւնը կորսնցուցին, ու իրեք զօրաւոր տէրութեանց իշխանութեանը տակ ընկան, այսինքն Ռուսի, Սուսորիոյ ու Պրուշի 1830^ն Ռուսաց բաժնին բնակիչները Ռուսներէն ապստամբեցան, ու թէպէտ քաջութեամբ պատերազմելով երբեմն յաղթեցին, բայց վերջապէս յաղթուեցան Փասքելիչ զօրավարը գնաց Վարսաւիան առաւ, ու զիրենք ալ բոլորովին նուաճեց : Ըստ ապստամբութիւննին իրենց շատ ծանր նստաւ, վասն զի առաջուց Ռուսաց կայսրը Սէհաց թագաւոր կ'օծուէր, մասնաւոր սահմանադրութիւն ունէին, բոլոր իրենց